

կերտ կը քշուէր հիմա նոր թագաւորութեան սահմանակից երկիրներէն՝ Ասորեստանէն, Կիլիկիայէն, Կապադովկիայէն, Եւայլն, յոյն եւ կէս-յոյն բնակչութիւնը:

Տիգրանի կերտը մէկն էր այն վիթխարի քաղաքներէն, որոնք աւելի շուտ ազգերու ու չընչութեան մասին կը վկայեն, քան տիրողներու մեծութեան, եւ որոնք կարծես գետնէն կը բուսնէին Նիւրատի երկրին մէջ իւրաքանչիւր նոր մեծ սուլթանի հզօր մէկ խօսքով: (Մոմսէն, հռոմէական պատմութիւն, հատոր Գ., էջ 40-41):

Տիգրան կը վարէր մեծաշուք կեանք մը: Իր պալատան մէջ դահադուրի շատ թագաւորներ պալատական պաշտօններ կը կատարէին: Չորս ամենամեծ ազնուականներ պէտք էր իր մօտ մնային իր թիկնապահ: Երբ ան ձիով տեղ մը կ'երթար՝ ասոնք ոտքով, հասարակ շապիկ մը հագած, պէտք էր վազէին անոր առջեւէն: Երբ գահ կը նստէր՝ ասոնք կանգնած կը մնային անոր առջեւ, եւ ի նշան ամենախոր հնազանդութեան՝ ձեռքերնին խաչաձեւ կը պահէին: (Պլուտարքոս, էջ 555):

Տիգրան ամենամեծ յարգանք կը պահանջէր դէպի իր անձը, եւ հետեւելով եգիպտական թագաւորներու օրինակին, Աստուծոյ տեղ կը դնէր ինքզինքը: (Բէյնախ, էջ 344): Ան երբեք ժողովուրդին չէր երեւար առանց հագնելու սպիտակ եւ կարմիր ծալքերով զուարճուած շապիկ, որ կը ծածկուէր ծիրանի վերաբիւրի երկայն ծալքերուն տակ: Ան անպատճառ դըլխուն դրած կ'ըլար աստղազարդ բարձր թաղը: (Դիոն Կասսիոս): Հռոմէական ամենատաղանդաւոր զօրավարներն անդամ, թէեւ անհաշտ թշնամիներ, կ'ընդունէին, որ աշխարհի ամենահզօր եւ մեծ թագաւորներն էին Միհրդատ Պոնտացին եւ Տիգրան Հայր (Պլուտարքոս, էջ 574):

Բայց այդ ասիական մեծ սուլթանը միեւնոյն ժամանակ հելլենականութեան սիրահար էր, — հանդամանք մը, որուն մէջ անշուշտ փոքր դեր չէր կատարեր գեղեցիկ կրթութիւն ստացած Կղէոպատրա թագուհին, որ աղջիկն էր Պոնտոսի Միհրդատ թագաւորին:

Հայ պատմութեան գիտնք, որ Տիգրանի առաջին զորքերէն մէկը եղաւ Հայաստանի բե-

րել յոյն աստուածները իրենց քուրմերով միասին. ան Դիոսի ողիմպական արձանը կանգնեց Անի բերդին մէջ, Աթենասինը՝ Թիլ, Արտամիսինը՝ Երիզա, Եփեսոսինը՝ Բագառայինջ, Իսկ Ափրոդիտինը՝ իրբեւ տարածու Հերակլէսի՝ Աշտիշատի մէջ Հերակլէսի արձանին քով: (Սոքրատէսի Բ. գիրք, 14-րդ գլուխ): Իր Արքունիքը լեցուն էր յոյն արուեստագէտներով, բըժիշկներով, գիտնականներով:

Վերջիններէս մէկը, յայտնի փիլիսոփայ եւ հետոր Մետրոդոր գրեց Տիգրանի մանրամասն պատմութիւնը, որմէ դժբախտաբար չէ մնացած հետք:

Տիգրան իր մայրաքաղաքին մէջ կառուց նաեւ թատրոն, որու համար շրջակայ երկիրներէն բերել տուաւ յոյն դերասաններու մեծ խումբ մը: Հայոց արքունիքը գրական-գեղարուեստական միջավայր մըն էր, ուր սնաւ Տիգրանի որդիներէն մէկը, Արտաւազդ:

Որեւէ մանրամասնութիւն չունինք Տիգրանի օրով ծաղկած թատրոնին մասին: Բայց ոչ մէկ տարակոյս, որ հելլէն ողբերգութիւններ էին խաղցուածները, յոյն դերակատարներով: Մեծագոյն ապացոյց այն, որ Արտաւազդ արքայորդին, որ յետոյ դարձաւ վեհապետ, իր հօրը օրով ուսաւ թատերախաղ դրելը: Ան կը գրէր յոյն լեզուով: Ան չէր կրնար մարդուիլ թատերական արուեստին մէջ՝ եթէ արդէն Հայաստան որդեգրած չըլլար հելլէն թատրոնը:

Բայց անտարակոյս հայ աղգային տարրն ալ կար արուեստի արտայայտութեան մէջ: Արտաշիսեան բովանդակ հարստութեան ատեն հայ ողին պահպանուած մնաց հայ կեանքին մէջ: Ինչպէս Արտաշէսի, նոյնպէս Տիգրանի օրով, հայ լեզուն նկատուեցաւ իրբեւ միութեան կապ Հայաստանի բովանդակ բնակչութեան միջեւ: Այդ լեզուով ալ անշուշտ գրականութիւն եղաւ, գոնէ երգերու մէջ:

Գողթան Երգերը պէտք էր տարածուած ըլլային մանաւանդ Տիգրանի օրով: Անցեր էր արդէն երեք քառորդ դար Արտաշէսի մահէն յետոյ, եւ պէտք էր տարածուած ըլլար անոր շուրջ հիւսուած ամբողջ գիւցադներգութիւնը, մանաւանդ ինչ կը վերաբերէր Սաթենիկի սի-